ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒՂԵՐՁ

«15» մայիսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Առողջ ընտանիքներով է կառուցվում առողջ հասարակություն

Մայիսի 15-ին նշվում է Ընտանիքի միջազգային օրը: Տոնը հաստատել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը՝ 1993 թվականին: Հայաստանում Ընտանիքի օրը նշվում է 2011 թվականից:

Ընտանիքը, որպես հասարակության հիմնական տարր, եղել եւ մնում է մարդկային արժեքների, մշակույթի ու սերունդների պատմական ժառանգականության պահապանը, կայունության ու զարգացման գործոնը:

Ընտանիքի շնորհիվ ամրանում ու զարգանում է պետությունը, աճում ժողովրդի բարեկեցությունը: Բոլոր ժամանակներում երկրի զարգացման մասին դատել են հասարակությունում ընտանիքի դիրքով:

Շնորհավորում եմ բոլորիս ընտանիքի օրվա առթիվ և մաղթում բարօրություն, սեր, առողջություն, մանկան զիլ ու զրնգուն ծիծաղ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ